ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

Արտահերթ նիստ

Նիստի նախագահ դոցենտ Ա.Ս.Գալստյանը նշեց, - « Հարգելի գործընկերներ նախքան նիստի հարցերին անցնելը՝ մի քանի հայտարարություն.

1. դեկտեմբերի 12-ին ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի է ունենալու դեկանների տարեկան հաշվետվությունը: Մեր ֆակուլտետի հաշվետվությունը կլինի ժամը 12-ից-13-ի միջակայքում, մուտքն ազատ է:

2. Դեկտեմբերի 16-ին ժամը 12-ին քիմիայի ֆակուլտետի 334 լսարանում տեղի է ունենալու քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի ընդլայնված նիստ: Նիստին ներկա է լինելու ռեկտոր Հ.Վ.Հովհաննիսյանը:

3. Դեկտեմբերի 18-ին ժամը 12-ին տեղի է ունենալու քիմիայի ֆակուլտետի դեկանի ընտրություն

Ա.Ս.Գալստյան- Տեղեկացնում եմ, որ 2025 թ. նոյեմբերի 28-ի թիվ 227/59-Լ հրամանի՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համալրման նպատակով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը հայտարարում է մրցույթ: Հաշվի առնելով գրասենյակում աշխատելու փորձը, և այն հանգամանքը, որ վերջին 6 ամսում հանդիսանում է Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ՝ Ա.Ս.Գալստյանը մտադիր է ներկայացնելու իր թեկնածությունը, մրցույթին մասնակցելու համար:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը, բաց քվեարկության միաձայն արդյունքով, երաշխավորեց Քիմիայի ֆակուլտետի դեկանի Ժ/Պ, ք.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գալստյանի թեկնածությունն՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համալրման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան –Օրգանական քիմիայի ամբիոնի առաջին տարվա հայցորդ Արթուր Արարատի Նիգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա.Ս.Գալստյանը հաղորդեց, որ Արթուր Նիգարյանը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Ամբիոնը քննարկել է նրա

ատենախոսության թեմայի հարցը և առաջարկում է «Սննդամթերքի փաթեթվածքի pH զգայուն սենսորի պատրաստում խաղողի պտուղներից կորզված ներկանյութերի հիման վրա» թեման Բ.00.03 «Օրգանական քիմիա» մասնագիտությամբ՝ ներառելով Բ.00.02 – Վերլուծական քիմիա (Օրգանական քիմիայի մասով), և գիտական ղեկավար՝ դոցենտ Ա.Ս.Գալստյան:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով որոշեց. հաստատել հայցորդ Արթուր Արարատի Նիգարյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման «Սննդամթերքի փաթեթվածքի pH զգայուն սենսորի պատրաստում խաղողի պտուղներից կորզված ներկանյութերի հիման վրա» վերնագրով: «Օրգանական քիմիա» մասնագիտությամբ, Բ.00.03 ծածկագրով՝ ներառելով Բ.00.02-Վերլուծական քիմիա (Օրգանական քիմիայի մասով), իսկ ղեկավար հաստատել դոցենտ Արմեն Սուրենի Գալստյանին:

Նիստի նախագահ, `

Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար

դոցենտ Մ.Ա.Սամվելյան